Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավարևելյան մասում: Մարզը բնակչության թվով հանրապետությունում ամենափոքն է, զբաղեցնում է 2308 քառ.կմ մակերես:

Հաշվետվությունը ներկայացվում է ըստ բնագավառների.

Քաղաքաշինություն

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ Ասիական Զարգացման Բանկի և Համաշխարհային Բանկի միջոցներով կատարվել է՝ 437 959.6 հազ. դրամի շինմոնտաժային աշխատանքներ, այդ թվում՝

Ջերմուկ համայնքում

1. Կեչուտ բնակավայրի ճանապարհների և մայթերի բարեկարգում՝ 159 610.869 հազ. դրամ,
2. Ջերմուկ քաղաքի բնակելի շենքերի շքամուտքերի վերանորոգում՝ 81 129.168 հազ. դրամ,
3. Քաղաքային զբոսայգու բարեկարգում, ոռոգման ցանցի կառուցում՝ 25 721.850 հազ. դրամ

Արենի համայնքում

1. Ռինդ բնակավայրում մանկապարտեզի շենքի հիմնանորոգում 129 190.693 հազ. դրամ:

Եղեգնաձոր համայնքում

1. Եղեգնաձոր թիվ 1 դպրոցի շենքի կառուցում՝ պայմանագրային գումարը 1 169 373.082 հազ. դրամ: 2019 թ-ին կատարվել է 86 379.8 հազ. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ: Ավարտը 2021թվականին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից պետական բյուջեի միջոցներով իրականացվել են մարզի համայնքների հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների 9 ծրագրեր 78 972.76 հազար դրամի չափով:

Ռազմավարական զարգացման գործակալության միջոցներով իրականացվել է 69 666.7 հազ. դրամի աշխատանքներ, որից համայնքների համաֆինանսավորումը կազմել է 26420.06 հազ. դրամ:

Սուբվենցիոն ծրագրերով մարզի համայնքներում իրականացվել է 22 ծրագիր, որն իր մեջ ընդգրկում է 40 օբյեկտ՝ 576 157.34 հազ. դրամ գումարով,

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվիրատվությամբ համայնքներում կառուցվել են մինի ֆուտբոլի 10 մարզադաշտեր 155 542.4 հազ. դրամ գումարով, այդ թվում՝ համայնքների համաֆինանսավորումը կազմել է 25 943.5 հազ. դրամ:

<<ՎիվաՍել ՄՏՍ>>-ի և <<Վայրի բնության ու մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ>>-ի միջոցներով 4 համայնքներում կատարվել են ջրագծերի հիմնանորոգման և փողոցային լուսավորության անցկացման աշխատանքներ՝ 61 394.55 հազ. դրամ գումարով:

<<Հաբիթաթ Ֆոր Հյումեն Արմենիա>>-ի միջոցներով հիմնանորոգվել է Վայք քաղաքի Ջերմուկի խճուղու 23 և Շահումյան փողոցի 24 բազմաբնակարան շենքերի տանիքները և մուտքերը 27 975.17 հազ. դրամ գումարով:

Համայնքային բյուջեի միջոցներով մարզի բնակավայրերում կատարվել են հիմնական և ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ 67 545.66 հազ. դրամի չափով:

ԸՆԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ 20192. իրականացվել է 1 475 214.18 հազ. դրամի շինմոնտաժային աշխատանքներ:

ՀՀ ՏԿ և ենթակառուցվածքների նախարարության հանձնարարականով կատարվել է համայնքների աղբավայրերի և աղբանոցների օնլայն քարտեզավորման աշխատանքներ:

Հետևողական աշխատանքներ են տարվել համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային թիվ 5222-ԱՄ ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր քաղաքում հիվանդանոցի նոր շենքի կառուցման համար հողհատկացման, չափագրման, հողամասի բաժանման, ՀՀ անշարժ գույքի կադաստրում գույքի գրանցման, հողամասերի փոխանակության վերաբերյալ որոշման նախագծի կազմման ուղղությամբ:

Վայոց ձորի մարզի ազգաբնակչությունն ապահովված է շուրջօրյա խմելու ջրով, որն իրականացվում է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի և համայնքապետարանների կողմից սպասարկվող ջրային համակարգերի միջոցով:

Վայոց ձորի մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17 բնակավայրը: Բաժանորդների թիվը 2018 թ-ի համեմատ ավելացել է 142-ով և կազմել է 8326:

Տրանսպորտ և ճանապարհաշինությունն

2019 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային ընթացիկ և ամառային ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվել է 267 կմ ճանապարհների ձմեռային և 170.4 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 323.4 մլն. դրամի չափով, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում իրականացվել է 146.3 կմ ձմեռային և 68.9 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 114.4 մլն. դրամի չափով:

2019 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել և իրականացվում են հետևյալ աշխատանքները.

1. Մ2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 140-րդ կիլոմետրում 100 մետր հենապատի կառուցում՝ 146 մլն. դրամ արժեքով:
2. Մ2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 101.4կմ-ից 108.4կմ հատվածի հիմնանորոգում (7կմ) 1.011 մլն. դրամ արժեքով /աշխատանքները կավարտվեն 2020թ. /
3. Մ2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 126.1կմ-ից 131.5կմ հատվածի հիմնանորոգում (5.4կմ) 529.7 մլն. դրամ արժեքով:
4. Մ2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 139կմ-ից 142կմ հատվածի հիմնանորոգում (3 կմ) 300 մլն. դրամ արժեքով /աշխատանքները կավարտվեն 2020թ./

Համաշխարհային բանկի միջոցներով հիմնանորոգվում են հետևյալ ճանապարհները

1. Մ2 – Գետափ 2,766 կմ - 368 մլն. դրամ արժեքով /աշխատանքները կավարտվեն 2020թ./
2. S–9–21 Արտաբույնք - Հորբատեղ 6,5 կմ 653..4 մլն. դրամ արժեքով /աշխատանքները կավարտվեն 2020թ./

Գյուղատնտեսություն և բնապահպանություն

Մարզում գործում են 308 ֆերմերային և գյուղացիական տնտեսություններ, որից՝ փոքր տնտեսություն՝ 234, միջին տնտեսություն՝ 39 , խոշոր տնտեսություններ՝ 35:

2019 թվականի ընթացքում ցրտահարության և կարկտահարության հետևանքով մարզում վնասվել են 558 հեկտար այգի, գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին պատճառված վնասը կազմել է մոտ 288մլն դրամ:

2019թ հունվարի մեկի դրությամբ մարզում առկա է 18523 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 7773 գլուխ, մանր եղջերավոր՝ 14100 գլուխ, որից 9655-ը ոչխար, 4634 գլուխ այծ, խոզեր՝ 3558 գլուխ, թռչուններ՝ 108580 թև և մեղվաընտանիք՝ 23821 փեթակ:

Ըստ համայնքներց ստացված տվյալների 2019թ մարզում արտադրվել է կաթ - 23000տ /ներառյալ այծի /, միս - 6000տ, ձու - 29.2մլն հատ: Արտադրվել է 184 տոննա պանիր, որի շուկայական միջին արժեքը կազմել է 2200 դրամ:

Մարզում գործում են երկու ձկնաբուծական տնտեսություններ, 2019թ արտադրվել է 13100կգ ձուկ:

118310 գլուխ խոշոր եղջրավոր կենդանիներ պատվաստվել են սուր վարակիչ հիվանդությունների դեմ: 19898 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ ախտորոշվել են բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ հիվանդությունների դեմ: 6703 գլուխ մանր եղջրավոր կենդանիներ պատվաստվել են դաբաղ

հիվանդության դեմ: 11011 գլուխ մանր եղջրավոր կենդանիներ ախտորոշվել է բրուցելյոզ հիվանդության նկատմամբ:

Անվճար մարզ է ներկրվել 75լ <<Տրիումֆ>> տեսակի թունանյութ և 120 հեկտարի վրա իրականացվել մորեխների դեմ պայքարի աշխատանքներ:

Աշնանը կատարված մոնիթորինգի արդյունքում Արփի, Արենի, Աղավնաձոր, Գլաձոր բնակավայրերում և Եղեգնաձոր համայնքում հայտնաբերվել է մկնանման կրծողներով միջին և բարձր վարակվածություն, որի դեմ պայքարի համար ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից անվճար տրամադրվել է 28լ <<Բրոմադիալոն 0.25>> թունանյութ՝ 350 հեկտարի համար: Թունանյութը բաշխվել է վարակված համայնքների հողօգտագործողներին՝ ապահովելով հրահանգով նախատեսված անվտանգության կանոնները:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ, Գետափ բնակավայրերում առկա է 7 հակակարկտային կայանքներ: 2019թ Ելփին բնակավայրում տեղադրվել է ևս մեկ կայանք:

Կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ են ևս 20 հակակարկտային կայաններ:

Ներդրումային ծրագրեր

1. Ջերմուկ համայնքի Կարմրաշեն բնակավայրում կատարվել է 100-120 մլն դրամի ներդրում՝ 100գլուխ մսային ուղվածության խոշոր եղջերավոր կենդանի ձեռք բերելու, տիպային անասնագոմի և սպանդանոցի կառուցման համար:
2. Չիվա բնակավայրում մասնավոր ներդրողի կողմից հիմնվել է 40հա խաղողի այգի կաթիլային ոռոգման համակարգով:
3. Ամերիկահայ ներդրողի կողմից գնվել է 60հա հողատարածք խաղողի այգի հիմնելու համար:

Դրամաշնորհային ծրագրեր.

Սահմանամերձ /Խաչիկ, Բարձրունի/ համայնքների սոցիալապես անապահով 20 ընտանիքներ ընդգրկված են <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի կողմից 2հա սխտորի մշակության դրամաշնորհային ծրագրում :

Ոռոգման սեզոնին գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին <<Եղեգնաձոր>> ՋՕԸ-ն ապահովել է անհրաժեշտ քանակի ոռոգման ջուր: 2019 թվականի մատակարարվել է 10.373 մլն մ^3 ջուր, հասույթը կազմում է 122 938 000դրամ, գանձվել է 133 758 000 դ, գանձման տոկոսը կազմում է 108%:

Մարզի բնապահպանական խնդիրների, բնության և շրջակա միջավայրի պետական ծրագրերի մշակման և դրանց իրականացումն ապահովելու համար սերտ համագործակցություն է իրականացվել <<Արփա պահպանվող լանդշավտի>>, <<Բեզոար>> բնապահպանական հիմնադրամի, <<Վայրի բնության և մշակույթային արժեքների պահպանման>> հիմնադրամի հետ:

Տարվա ընթացքում արջի կողմից մարզի բնակչությանը հասցվել է 4 158 400 դրամի վնաս, որից 2 000 000 դրամ փոխհատուցել է <<Բեզոար>> բնապահպանական հիմնադրամը և 450 000 դրամ <<Արփա պահպանվող լանդշավտ>> ՀԿ-ի կողմից:

2019 թվականին Ջերմուկ համայնքում <<Ջինջ Արփա>> ՍՊԸ-ի կողմից 6.5 հեկտար հողատարածքի վրա տնկվել է մոտ 20 000 վայրի պտղատու և դեկորատիվ տնկիներ:

2019թ դեկտեմբերի 1-ի դրությամբ <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի <<Անտառտնտեսության>> մասնաճյուղերում անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի բնակիչներին անվճար տրամադրվել է 625 պահեստային խ/մ թափուկ վառելափայտ:

Մարզի տարածքում գործող անտառտնտեսության հաշվեկշռում գտնվող 13688 հա հողատարածքներից անտառածածկ է 10156 հա:

Արտավան, Բարձրունի, Գոմք, Խնձորուտ, Մարտիրոս, Նոր Ազնաբերդ, Սերս բնակավայրերում ավարտական փուլում է գտնվում <<Բնության համաշխարհային հիմնադրամ>>-ի /WWF/ կողմից իրականացվող և Գերմանիայի կառավարության կողմից՝ KfW զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող <<Էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն>> տարածաշրջանային ծրագիրը:

Ֆինանսներ

<<ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանին 23 ծրագրերով 2019թ.-ի համար նախատեսվել են ծախսեր 3001331.6 հազ.դրամ գումար, փաստացի ֆինանսավորվել է 2819321.4 հազ. դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 93.94%-ով, որից.

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պահպանման համար 2019 թվականին նախատեսվել է ծախսեր 475505.0 հազ.դրամ գումար, փաստացի ֆինանսավորվել է 465317.76 հազ.դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 97.86 %-ով:

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին՝ 2019թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 65842.4 հազ.դրամ գումար, փաստացի ֆինանսավորվել է 52938.5 հազ.դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 80.4 %-ով՝ թերի ֆինանսավորումը պայմանավորված է կատարված փաստացի ծախսերի հետ:

Մշակույթի ոլորտին նախատեսվել է 25461.3 հազ դրամ գումար, փաստացի ֆինանսավորվել է 24357.3 հազ.դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 95.66%-ով:

Կրթության ոլորտի ծախսեր նախատեսվել է 1859510.3 հազ.դրամ գումար, փաստացի ֆինանսավորվել է 1856578.94 հազ. դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 99.84%-ով:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ նորոգում ծրագրով նախատեսվել է 114423.0 հազ. դրամ գումար, փաստացի ֆինանսավորվել է 114423.0 հազ. դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում ծրագրով նախատեսվել է 88632.0 հազ. դրամ գումար, փաստացի ֆինանսավորվել է 77149.9 հազ. դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 87.05%-ով:

ՀՀ կառավարության 2019 թվականի պահուստային ֆոնդից ՀՀ Վայոց ձորի մարզին սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար հատկացվել է 372197.6 հազ. դրամ գումար, որից փաստացի ֆինանսավորվել է 233052.3 հազ. դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 62.62 %-ով, թերի ֆինանսավորումը կազմում է 139145.26 հազ. դրամ գումար, որը պայմանավորված է սուբվենցիոն ծրագրերի փաստացի կատարման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի բացակայության հետ:

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 8 համայնքների տեղական բյուջներով ընդամենը եկամուտներ են նախատեսվել 2338771.2 հազ. դրամ գումար, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից հավաքագրվել է 2322785.8 հազ. դրամ գումար, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 99.3%-ով, որից սեփական եկամուտներ՝ նախատեսվել է 931447.5 հազ. դրամ գումար, փաստացի հավաքագրվել է 928511.0 հազ. դրամ գումար կամ կատարվել է 99.7%-ով, որի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմում է 7.6 տոկոս: Համահարթեցման կարգով ՀՀ 2019թ. պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 1122760.6 հազ. դրամ գումար դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Սուբվենցիոն ծրագրեր

2019թ. մարտ ամսին մարզպետարանը համայնքներից ստացել է թվով 29 սուբվենցիոն հայտ՝ 1 008,6 մլն դրամ գումարով, որից 418,4 մլն դրամը կամ 42,2 %-ը համայնքների ներդրումն է, իսկ 590,2 մլն դրամը կամ 57,8 %-ը ՝ սուբվենցիայի գումարն է:

ՀՀ մշակույթի նախարարության կողմից մերժվել է Ջերմուկ համայնքի ըմպելասրահի և տանիքի վերանորոգման ծրագիրը, որը նոր ճարտարապետական լուծում ստանալուց հետո կներկայացվի 2020 թվականին:

Հաստատված ծրագրերից չի կատարվել 5-ը՝ լրացուցիչ տեխնիկական ուսումնասիրության անհրաժեշտության և ֆինանսական միջոցների սղության պատճառով (1.Արենի համայնքի Արփի բնակավայրում նախկին ճաշարանի շենքի չվերանորոգված հատվածի հիմնանորոգում, 2.Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզի շենքի 2 բաց պատշգամբների հիմնանորոգում և

ծածկերի կառուցում, 3. Արենի համայնքի Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի, Ելփին և Չիվա բնակավայրերում պուրակների կառուցում, 4.Վայք քաղաքի ներհամայնքային փողոցների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ, 5. Արին բնակավայրի գիշերային լուսավորության վերականգնում):

Հաստատված 28 ծրագրերից 23-ի մասով հայտարարվել է մրցույթ, որոնցից 1-ը չի կայացել՝ մասնակից չլինելու պատճառով (Գլաձոր համայնքի բնակավայրերի ներքին ճանապարհների խճապատում և բարեկարգում):

ՀՀ վարչապետի 2019 թ. մարտի 19-ի 278-Ա որոշմամաբ ստեղծված հանձնաժողովի կողմից հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերով մարզի համայնքներում իրականացվել է 22 ծրագիր, որն իր մեջ ընդգրկում է 40 օբյեկտ 576 157.34 հազ. դրամ գումարով, այդ թվում՝ Արենի համայնքի Արենի, Աղավնաձոր, Արփի, Չիվա և Ռինդ բնակավայրերում փողոցների փոսային լցում ասֆալտով կամ ասֆալտապատում (Ռինդ և Արփի բնակավայրերի փողոցների ասֆալտապատումը եղանակային պայմաններից ելնելով տեղափոխվել է 2020 թվական): Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի մանկապարտեզի վերանորոգում (շենքի լրացուցիչ ամրացման անհրաժեշտության պատճառով ծրագիրը տեղափոխվել է 2020թ.): Ջերմուկ քաղաքի մարզադպրոցի մասնաշենքի հիմնանորոգում և արդիականացում (եղանակային պայմաններից ելնելով տեղափոխվել է 2020 թվական):

Զբոսաշրջություն

Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակում մարզպետարանը աջակցել է Թուֆենկյան հիմնադրամի կողմից Արենի գյուղում կառուցվող հյուրանոցային համալիրի ենթակառուցվածքների պետական միջոցներով ստեղծմանը:

Տուրիզմի տարածաշրջանային կենտրոնի հետ մշակվել է հյուրատների զարգացման ծրագիր: Մրցույթի արդյունքում շահած 25 հյուրատների ներդրումային ծրագրերի ֆինանսավորումն ավարտվել է նոյեմբեր ամսին:

Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվում են նաև Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը: Համայնքների և զբոսաշրջային կենտրոնների հետ համատեղ աշխատանքներ են տարվել՝ Երևան–Մեղրի ճանապարհից հեռու գտնվող զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային հուշարձանների ենթակառուցվածքները զարգացնելու, ինչպես նաև նրանց մասին համարժեք տեղեկատվության տարածումն ապահովելու ուղղությամբ:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր և նոյեմբեր ամսին ներկայացվել են ՀՀ կառավարություն, ինչպիսիք են՝ Նորավանքի կիրճի, Եղեգիսի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը:

Նոյեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում քննարկումներ են իրականացվել Զբոսաշրջության պետական կոմիտեի համապատասխան մասնագետների հետ, որոնց ընթացքում ներկայացվել է 5 ծրագիր՝ Արենի բնակավայրում միջոցառումների հրապարակի կառուցում՝ իր ենթակառուցվածքներով, Սմբատաբերդի ճանապարհի վերանորոգում, Ջերմուկի զբոսայգու վերանորոգում, Մարտիրոսի վիմափոր եկեղեցու ճանապարհի վերանորոգում, Շատիվանքի ճանապարհի վերանորոգում, որոնցից առաջին երեքը հավանության են արժանացել և ընդգրկվել Համաշխարհային բանկի կողմից 2020 թվականին իրականացվող ծրագրերի ցանկում:

Արտաքին հարաբերություններ

2019 թվականի ընթացքում արտաքին կապերի զարգացման, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ գործնական փոխշահավետ կապերի ստեղծման ուղղությամբ իրականացվել են մարզի տնտեսվարող սուբյեկտների համար փոխշահավետ կապերի ստեղծման և համագործակցության ընդլայնման լայնածավալ աշխատանքներ:

Մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական

Հանրապետություն (Ուրմիա նահանգ), ՌԴ(Նիժնի-Նովգորոդի Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետություն (Մինսկի մարզ): Համաձայնագիր է կնքվել ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ և Չեխիայի Հանրապետության Կարլովի Վարի քաղաքների միջև, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի և ՌԴ Բակաու նահանգի Թրգու Օկնա քաղաքի միջև, ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի և Ֆրանսիայի Հանրապետության Պրովան-Ալպ-Կոդ դ՝ Ազյուր շրջանի Վար դեպարտամենտի Բանդոլ քաղաքի միջև:

Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ քննարկվել է բազմակողմ համագործակցության հարցը, որի արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ՌԴ Արխանգելսկի մարզի հետ՝ ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերում տուրիստական կենտրոններ հիմնելու վերաբերյալ:

Հողաշինություն և հողօգտագործում

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 231013.0 հա: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում է 189600.6 հա, այդ թվում վարելահող՝ 15741.8 հա, բազմամյա տնկարքներ՝ 1994.4 հա, խոտհարքներ՝ 5057.4 հա, արոտ՝ 92255.4 հա, այլ հողատեսքեր՝ 74551.6հա: Մարզում ոռոգվող հողերը ընդամենը կազմում են 6725.4 հա:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշման Արենի, Գլաձոր և Ջերմուկ համայնքներում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից – բարձրարժեքի, որի արդյունքում հիմնվել է 90.0 հա այգի: Կատարվել է նաև բարձրարժեքից – ցածրարժեքի փոփոխություններ: Վայք համայնքի Զեղեա բնակավայրի քաղաքացու սեփականություն հանդիսացող 1.6 հա պտղատու այգին և Ջերմուկ համայնքի Հերհեր բնակավայրի իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող 16.7 հա վարելահողերը փոխվել են ցածրարժեք հողատեսքերի՝ համապատասխանաբար վարելահողերի և խոտհարքերի:

ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 15 առաջարկություններ, որից 12-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն: Մնացած 3-ը ընթացքի մեջ են:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համաձայնեցմանն է ներկայացվել Զառիթափի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 0.126 հա օտարման առաջարկություն, որի համար նախարարությունը տվել է դրական եզրակացությունը:

Առողջապահություն

2019թ. մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 767420.3 հազ. դրամ: Մատուցվել է 79288.2 հազ դրամի վճարովի ծառայություններ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում եղել է 60393.4 հազ.դրամ (աճը կազմում է 18894.8 հազ. դրամ):

2019թ. ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 56 տեղից ուղեգրող հանձնաժողովի կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 40 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 7 մեծահասակ և 6 երեխա:

2019 թվականին պոլիկլինիկաներում և ամբուլատորիաներում աշխատող բժիշկների աշխատավարձերը բարձրացվել են 15%-30%-ով:

2019 թ. ընթացքում հաշվառվել է 315 ծնունդ:

Մարզի հիվանդանոցային բժշկական հիմնարկները համալրվել են բժշկական, բուժքույրական նոր կադրերով և բուժսարքավորումներով: Եղեգնաձորի ԲԿ-ում ավելացել է շտապ օգնության 4 բրիգադ:

Մարզում <<Լույս հայի աչքերին>> ծրագրի շրջանակներում իրականացվել են մասնագետների այց սահմանամերձ 4 գյուղեր:

Պետական պատվերի շրջանակներում վերապատրաստվել են մարզի 16 բուժաշխատողներ:

Սոցիալական ապահովություն

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի սոցիալական աջակցության տարածքային 3 գործակալություններում փաստագրվել են 2266 ընտանիքներ, որից նպաստառու են 1864-ը: Նրանց վճարվել է 673,7մլն դրամ նպաստ: Սոցիալական համագործակցության աշխատանքները համակարգող խորհուրդների որոշումներով նպաստի համակարգից դուրս մնացած սոցիալապես անապահով 425 ընտանիքների նշանակվել է հրատապ եռամսյակային դրամական օգնություն, որոնց վճարվել է 23 մլն դրամ:

ԽՍՀՄ խնայբանկի ավանդի փոխհատուցում են ստացել 475 քաղաքացիներ 75,6 մլն դրամի չափով :

<<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրման>> ծրագրում ընդգրկվել է 45 ընտանիք:

Մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոններում 2019թ. ընթացքում գրանցվել են 1017 գործազուրկներ: <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրի շրջանակում իրականացվել է 5 ծրագիր 4500,0 հազ դրամ արժողությամբ:

<<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության տրամադրում>> ծրագրով ժամանակավոր աշխատանք է ունեցել 69 գործազուրկ: Մարզի երեք սոցիալական ապահովության տարածքային բաժիններում հաշվառված են 9263 կենսաթոշակառուներ, ամսական միջին կենսաթոշակի չափը կազմել է 39832 դրամ:

Հաշվառվել է բնակարանի բարելավման կարիք ունեցող հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին և զոհված (մահացած) զինծառայողների 44 ընտանիքներ:

2019 թվականին տարածքային և կենտրոնացված հաշվառման է վերցվել մարզի 16 առանց ծնողական խնամքի մնացած երեխա, որոնցից 2 երեխա տեղավորվել է <<ՀՕՖ- երեխայի աջակցության կենտրոնում>>: Տրվել է դրական եզրակացություն շուրջօրյա խնամքի հաստատությունից կենսաբանական ընտանիք վերադարձող 9 երեխայի: Կենտրոնացված հաշվառումից հանվել է առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխա:

ՀՀ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության տարածքային բաժինների ԱԳ և ԸԲԿ խմբերի հետ համատեղ ապահովվել է 21 իրավախախտ երեխայի իրավունքների և շահերի պաշտպանություն:

Ապահովվել է 57 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների երեխաների և նրանց կենսապայմանների սոցիալ-հոգեբանական վիճակի ուսումնասիրություն:

Հաշվառման է վերցվել Վայք համայնքից որդեգրողի 2 թեկնածու:

Ապահովվել է ընտանեկան տարաձայնություն ունեցող, ամուսնալուծության գործընթացում գտնվող 5 ընտանիքներում ծնողների իրավունքների պաշտպանությունը:

Օրենքով սահմանված կարգով ստեղծվել է բազմամասնագիտական խումբ՝ խնամատար ընտանիքի ինստիտուտը ներդնելու համար:

Կրթություն

Մարզում գործում է մեկ ԲՈՒՀ՝ Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը, մեկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն՝ Եղեգնաձորի պետական քոլեջը և 48 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ Եղեգնաձոր, Վայք քաղաքներում 1-ական առանձնացված ավագ դպրոց, Ջերմուկ քաղաքում 1 կրթահամալիր:

Մնացած 45 դպրոցները գործում են մարզային ենթակայությամբ, որոնցից 31-ը միջնակարգ են, 14-ը՝ հիմնական:

Մարզի դպրոցներում սովորում են 6504 աշակերտներ, աշխատում են 883 ուսուցիչներ, որոնց շուրջ 90%-ը (795 ուսուցիչ) ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

Լուծված է դպրոցների ջեռուցման խնդիրը: 17 դպրոց ջեռուցվում է գազի լոկալ կաթսայատան միջոցով, 1-ը (Խաչիկի միջն.) կոշտ վառելիքով աշխատող լոկալ կաթսայատան միջոցով, մնացած 30 դպրոցները էլեկտրական ջեռուցիչներով: Աշխատանքներ են տարվում ջեռուցման այլընտրանքային աղբյուրներ ներդնելու ուղղությամբ (մասնավորապես արևային էներգիայի օգտագործման համար):

Մարզի 17 դպրոցներում և 9 մանկապարտեզներում բացվել և գործում են նախակրթարաններ, որոնցում ընդգրկված է 178 երեխա:

Համայնքային ենթակայությամբ գործում են 16 մանկապարտեզներ, որոնցում ընդգրկված է 1246 երեխա:

Մարզի բոլոր դպրոցներում գործում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Սնունդ են ստանում 1-4-րդ դասարանների 2338 աշակերտներ:

Մարզային ենթակայությամբ գործող 10 դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն, որտեղ ընդգրկված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 157 աշակերտ:

Հանրակրթության կազմակերպելիս առաջնորդվել ենք ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերով:

Կազմակերպվել, անցկացվել և ամփոփվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին մասնակցել են 9-12–րդ դասարանների 512 աշակերտներ, որոնցից 48-ը իրավունք են ստացել մասնակցելու հանրապետական փուլին.

Կազմակերպվել է պետական ավարտական և միասնական քննությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքները: Միասնական քննություններին մասնակցել են 218 դիմորդներ, որոնցից 184-ը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ (շուրջ 84%-ը):

2018-2019 ուսումնական տարում 9-րդ դասարանն ավարտել են 568, իսկ 12-րդ դասարանը՝ 416 շրջանավարտներ:

Ամռան ընթացքում ՀՀ կառավարության որոշմամբ 3 հերթափոխով 20-ական օրով կազմակերպվել է մարզի զոհված զինծառայողների, ծնողազուրկ և սակավ ապահովված ընտանիքների 7-13 տարեկան 190 երեխաների ամառային հանգիստը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Բոլոր աշակերտներն ապահովվել են դասագրքերով: Դասագրքերի վարձակալության գումարները հավաքագրվել են 100%-ով:

Մշակույթ

Մարզում գործում է երկու թանգարան, երկու պատկերասրահ, մեկ երաժշտական դպրոց և չորս արվեստի դպրոցներ, մեկ գեղարվեստի դպրոց:

Մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում սովորողների թիվը 745 է, իսկ դասավանդողների թիվը 92:

Գործում է 36 գրադարան համայնքային ենթակայությամբ, 31 մշակույթի տուն:

Անցկացվել են տարաբնույթ մշակութային միջոցառումներ և փառատոներ նվիրված պետական տոներին և հիշատակի օրերին:

2019 թ. <<Աջակցություն մշակութային միջոցառումներին>> ծրագրով մարզին հատկացվել է 5.353. հազ. դրամ, 13 միջոցառումների համար: Անցկացվել է 10 միջոցառում, որի համար՝ ծախսվել է 3.840.000 դրամ:

Սպորտ

Մարզում գործում է 3 մարզադպրոց և Ջերմուկի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ը: Նրանցում գործում են ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, ըմբշամարտի, քիքբոքսինգի, շախմատի խմբակներ, որոնցում ընդգրկված են շուրջ 400 երեխաներ:

Տարվա ընթացքում անցկացվել են մի շարք մարզական միջոցառումներ (մարզական փառատոններ, մրցույթներ, հուշամրցաշարեր, սպարտակիադաներ, սպորտլանդիաներ), ինչպես նաև ապահովվել է մարզային թիմերի մասնակցությունը հանրապետական մրցույթներին:

Տեղական Ինքնակառավարում

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման համակարգի մարմինների հետ:

Աշխատանքներ են տարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարման նպատակով ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետներում մարզպետարան ներկայացնելու, որոշումները օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնությունը ապահովելու ուղղությամբ :

Իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր, Եղեգիս և Արենի համայնքներում:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ, ինչպես նաև հետևողական միջոցներ են ձեռնարկվել թերությունների վերացման ուղղությամբ:

Պատշաճ կարգով համակարգվել են <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների պահանջներից բխող աշխատանքները:

Հետևողական միջոցներ են ձեռնարկվել մարզի տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման աշխատանքների իրականացման առնչությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում պատշաճ վերահսկողություն է իրականացվել մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

Պատշաճ կարգով համակարգվել են մարզի համայնքներում աղբահանության ծառայության իրականացման աշխատանքները:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ: Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների լուծման աշխատանքները:

2019 թվականի ընթացքում ըստ անհրաժեշտության համագործակցություն է ապահովվել նաև պետական կառավարման համակարգի մարմինների հետ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

15.01.2020թ.